

23824



Ա. Արդրեզեան

Աւագանովան շարժումը
ՅԵՎ ՄԵՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ

{ 0.660404008 • 1936

331.87

Q-58

2 FEB 2010

331.87

Ա-57

Գրահանութեա բույս յեկետներ, մթուն

ԱՐ

Ա. ԱՆԴՐԵԱՏ

ԱՍԱԽԱՆՈՎՅԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ
ՅԵՎ ՄԵՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1809
39028

1014

Ճառ՝ առասանած
Համ Կ(Բ)Կ ԿԿ պլենումը
1985 թ. դեկտեմբերի 24-ին



Ա. Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ

12.02.2013

23824

А. АНДРЕЕВ
СТАХАНОВСКОЕ ДВИЖЕНИЕ
И НАШИ ЗАДАЧИ

Армпартиздат, Триевань

Բնկերներ, ընկեր Ստալինը ստախանովականների խորհրդակցությանն իր արտասահմած ճառում սպառիչ կերպով բնորոշեց այս մեծ շարժումը։ Բնկեր Ստալինի այդ ճառը մի հղոր կոչ էր, վորին մեր խորհրդակային յերկը բանվորները պատասխանցին ստախանովյան շարժման նոր վերելքով, և այնտեղ, վորտեղ կային հատ ու կենտ ստախանովականներ, նրանք դարձան տասնյակներ ու հարյուրավորներ, այնտեղ, վորտեղ կային առանձին խմբակներ, շարժումն ընդգրկեց ամբողջ ձեռնարկություններ, իսկ այն ստախանովականները, վորոննք առանձին ձեռնարկություններում

Հանդիսանում ելին ստախանովյան շարժ-
ման պիոներները, ստախանովյան խորհըր-
դակցությունից հետո տվին աշխատանքի
արտադրողականության նոր ռեկորդներ,
այսինքն ավելի հեռու գնացին։ Այդ ցուց
և տալիս միայն այն, վոր այդ մարդիկ՝
ստախանովյականները, ինչպես նրանց ճիշտ
բնորոշից ընկեր Ստալինը, — նոր մարդիկ
են, վոչ թե ժամանակավոր հաջողություն-
ների մարդիկ, այլ այնպիսիք, վորոնք ի-
րենց խոսքը քամուն չեն տալիս, մարդիկ,
վորոնք իրենց խոստումները ճշտիլ կր-
տարում են։ Դրա առաջուցյն են հանդի-
սանում, որինակ, ջուլհակուհի Վինովա-
դովյաները, վորոնք խորհրդակցության ժա-
մանակ խոստում տվին ընկեր Ստալինին և
գործարան վերադառնալով անցան 216 դադ-
դյան։ Այդպիսի որինակներ շատ կարելի
են բերել։

Այդպիսով ստախանովյան շարժումն այ-
ժըմ համակել ե ամբողջ յերկիրը։ Այժմ
չկա վոչ մի անկյուն, վոչ մի ձեռնարկու-

թյուն, վորտեղ ստախանովյականներ չլինեն
և վորտեղ այդ խոսքը հատուկ պատիվ չը-
վայելի։

Դժվար է ստախանովյան շարժման ար-
դյունքները պարփակել վորեւ թվերի կամ
վիճակագրական տվյալների մեջ, սակայն
պարզ է մի բան՝ ստախանովյան շարժումն
արդեն հսկայական չափով անդրադարձավ
մեր ամբողջ տնտեսության վրա և յելակետ
դարձավ մեր հետագա ամբողջ տնտեսական
աշխատանքի համար։ Այժմ դրանից պետք
է յելնել տնտեսության զանազան ճյուղերի
և յուրաքանչյուր առանձին ձեռնարկու-
թյան արտադրության բոլոր պլանները կա-
ռուցելիս։

Մեր ստախանովյան շարժումը դեռ շատ
յերիտասարդ է, սակայն նա արդեն բավա-
կանաչափ լուրջ հաշվեկշիռ ունի։ Ստախա-
նովյան շարժման արդյունքն է հանդիսա-
նում այն, վոր մեր տնտեսության ճյուղե-
րը մեկը մյուսի հետեւից ժամկետից առաջ
կատարում են իրենց արտադրական պլան-

ները։ Ստախանովյան շարժումը լուրջ կերպով զբեց հնդամյակը ժամկետից առաջ կատարելու հարցը։ Նա արմատապես փոխում ե մեր ձեռնարկությունների նախագծային բոլոր կարողությունները՝ բարձրացնելու ուղղությամբ։ Նա կոտրեց հին նորմաները։ Ստախանովյան շարժումը նոր բարձրության հասցրեց բանվորների նյութական մակարդակը և նրանց աշխատավարձը։

Յեվլ, վերջապես, ստախանովյան շարժումը ԽՍՀՄ-ն նոր բարձրության և հասցնում ամբողջ կապիտալիստական աշխարհի առջև, և այդ և նրա քաղաքական հսկայական նշանակությունը։

Բայց և այնպես, չնայած դրան, մենք պետք ե ասենք, վոր ստախանովյան շարժումը դեռ իր սկզբնական շրջանումն և դժոնվում։ Այդ վկայում ե, թե ինչպիսի հսկայական ուժեր ունի նա իր մեջ։ Այդ վկայում ե, վոր ստախանովյան շարժումը, վոր շարունակում է ծավալվել, դեռ իրեն

ցույց կտա առաջիկայում։ Նա դեռ չի ծավալել իր ամբողջ հսկայական ուժը։

Ստախանովյան շարժման կապակցությամբ մեր ունեցած խնդիրները շատ վորոշակի ձևակերպված են ընկեր Ստալինի հայտնի ճառում, գործողությունների այդիսկական ծրագրում, վոր տրված ե մեր կուսակցության աշխատանքի ամբողջ առաջիկա շրջանի համար։ Ներկա պլենումի խնդիրն ե՝ գործողությունների այդ ծրագրի հիման վրա կոնկրետացնել կուսակցական, անտեսական, խորհրդային, կոմյերիտական ու արհմիութենական կազմակերպությունների առաջիկա գործնական աշխատանքը։

Ստախանովյան շարժումը շատ հարցեր ե զնում մեր առջև։ Յես կուղեյի կանդ առնել միմյա այն միքանի հարցերի վրա, վորոնք վորոշելու յեն ստախանովյան շարժման թե՛տեմպեերը, թե՛ առաջիկա հաջողությունները։

Ընկեր Ստալինն իր ճառում ասաց։

«Թնդիթն այն ե, վոր ոգնենք ստախա-
նովականներին՝ ե՛լ ավելի ծավալելու
ստախանովյան շարժումը և այն լայն ու
խոր տարածելու հՍՀՄ-ի բոլոր մարզե-
րում ու շրջաններում»:

Ի՞նչպես ե ծավալվում մեղ մոտ ստախա-
նովյան շարժումը: Առայժմ նա դեռ խայ-
տաբղետ կերպով ե ծավալվում: Ինքնին
հասկանալի յե, վոր այդ մեծ շարժման ա-
ռաջին հտազում միանդամայն անխուսա-
փելի յե վորոշ խայտաբղետությունը:
Բայց մենք պետք ե յելնենք նրանից, վոր
յեթե այդ խայտաբղետությունը շարու-
նակվի, նա կարող ե վորոշ ճակատամասե-
րում ճախողում սպառնաձև ստախանովյան
շարժմանը: Յեթե մեր տնտեսության ա-
ռանձին ճակատամասերն սկսեն հետ մնալ,
խոկ մյուսներն առաջ գնան, կարող ե խզում
առաջանալ արտադրության հոսանքում,
հետ մնացողները կվիճեցնեն ու կդանդա-
ղեցնեն առաջ գնացող ճյուղերի գործը:

Սկսենք վերևից՝ վերցնենք ժողկոմաս-

ները և աեսնենք, թե ի՞նչ վիճակի մեջ է
գործը: Մանր Արդյունաբերության Ժող-
կոմատը մնացած բոլորից առաջ ե քայլում:
Նրան հետեւոմ են յերկաթուղային տրանս-
պորտը և սննդարդյունաբերությունը: Հետ
են մնում տնտեսության մյուս ճյուղերը,
որինակ՝ այնպիսի կարեոր ճյուղեր, ինչ-
պիսիք են թեթև ու տեղական արդյունաբե-
րությունը: Հետ ե մնում տնտեսության
այնպիսի ճյուղ, ինչպիսին ե անտառայի-
նը, վորը հսկայական նշանակություն ունի
ամբողջ հիմնական շինարարությունն ա-
պահովելու համար: Հետ ե մնում ջրային
տրանսպորտը:

Յես կուգեյի կամդ առնել թեթև արդյու-
նաբերության վրա, վորտեղ առանձնապես
ցայտուն կերպով ե արտահայտված ստա-
խանովյան շարժման թույլ ծավալումը և
նրա սինալ ուղղությունը: Հայտնի յե, վոր
թեթև արդյունաբերության մեջ քիչ չեն
նշանավոր ստախանովականները: Բոլորին
ել հայտնի յեն վիճողադովանների, իլա-

բիոնովայի, Ողինցովայի, Լապշինայի և
ուրիշ շատերի անունները, վորոնք ջուլհա-
կության ասպարեզում շատ հեռու յեն թո-
ղել արտադրողականության ամերիկյան
բոլոր նորմանները։ Յեզ, սակայն, պետք ե
ասել, վոր ստախանովյան շարժումը թե-
թև արդյունաբերության մեջ միակողմա-
նի յե զարգանում։ Ի՞նչ խնդիր ե դրել
ստախանովյան շարժումը։ Քամել տեխնի-
կայից ամեն ինչ, մինչև հատակը։ Արդյոք
այդպիսի՝ ուղղություն ունի գործը տեքո-
տիւ արդյունաբերության մեջ։ Վո՛չ, ըստ
իս, այդպիս չե։ Այստեղ գործին տրված ե
գլխավորապես այնպիսի ուղղություն, վոր
ավելի քիչ թվով բանվորներ ընդդրկեն
ավելի մեծ թվով դազդյաներ։ Այդ ճիշտ
չե, վորովհետեւ այդ պրակտիկայի հե-
տեանքն ե լինում այն, վոր այնուեղ տեխ-
նիկան ինչպիս հարկն ե չի ողտադորձ-
վում։ Դրան ապացույց ե այն փաստը, վոր
հարյուրավոր ու նույնիսկ հազարավոր
ստախանովականներ ունեցող առանձին

անքատիւ գործարանները չեն կատարում.
իրենց արտադրական պլանները։ Մեծ թվով
գաղցյահներ սպասարկելու, ջուլհակնե-
րի ու մանողների աշխատանքը մեքենա-
յաբար խտացնելու հետեւց ընկնելը
հանդում ե յուրաքանչյուր դազդյահի ար-
տադրական նորմանների թերակատարմանը։
Յես կարող եյի այստեղ առանձին փաս-
տեր բերել։ Վեցցնենք, որինակ, մետաքսի
արդյունաբերությունը։ Համկ(ր)կ կենա-
կոմի արդյունաբերական բաժինը հետա-
դուեց 8 գործարան։ Խտացված աշխատան-
քի անցած այդ գործարաններում կա 1481
բանվորուհի։ Դրանցից դազդյահի նորման
չեն կատարում 59 տոկոսը։ Բամբակեղենն
գործվածքների 19 գործարանում 1654 ջուլ-
հակուհի փոխադրվել ե խտացված աշխա-
տանքի։ Նրանցից նորման չեն կատարում
736 բանվորուհի, այսինքն համարյա-
կեսը։ Բրդեղենի գործարանները, — 1556
բանվորուհի փոխադրվել են խտացված աշ-
խատանքի, նրանցից նորմա չեն կատարում

436 բանվորուհի : Սերեղայի վուշի կոմբի-
նատն ունի 856 բանվորուհի , վորոնք ստա-
խանառվականներ են համարվում և փոխա-
դըրված են խոտցված աշխատանքի , իսկ
նրանցից 488 բանվորուհի նորման չեն կա-
տարում : Յես կարող ենի դեռ շարունակել
այս ցուցակը : Ի՞նչ են վկայում այս փաս-
տերը : Նրանք վկայում են ստախանովյան
շարժման Եյությունը խեղաթյուրելու մա-
սին : Մեծ թվով դազգյահներ սպասարկե-
լու հետեւից ընկնելն առաջ ե բերում նոր-
մաների մասսայական թերակատարում և
սարքավորման վատ ողտադրծում : Դրա
հետևանքը լինում ե այն , վոր բավակա-
նաչափ մեծ թվով ստախանովյականներ ու
նեցող դործարաններ , այնուամենայնիվ ,
ընթանում են պլանի թերակատարումով ,
որինակ՝ Յակովլեվսկի կոմբինատն ունի
1140 վինոգրադովյական , իսկ 11 ամսում
պլանը կատարվել ե միայն 66 տոկոսով :
Ճի՞շտ ե արդյոք ստախանովյան շարժման
դարպացման այլպիսի դիմումային

ուղղությունը : Իհարկե ճիշտ չե : Արդյոք
միմիայն տեքստիլ արդյունաբերությանը
ե սահմանափակվում այս բանը : Յես կար-
ծում եմ , վոր վոչ միայն տեքստիլ ար-
դյունաբերությամբ : Այնտեղ այդ խեղա-
թյուրումն ամենացայտուն արտահայտու-
թյունն ե գտել միայն : Սակայն այդ գծով
պետք ե ստուգել մեր տնտեսության նաև
մյուս բոլոր ճյուղերը և առանձին ձեռնար-
կությունները :

Դրանով յես բնավ չեմ ուզում ասած լի-
նել , թե բանվորներին չպետք ե փոխադրել
մեծ թվով մեքենաների ու դազգյահների
սպասարկման , բայց պետք ե փոխադրել
բանիմաց կերպով , առաջուց նախապատ-
րաստական լավ աշխատանք կատարելով ,
փոխադրել այնպես , վոր այդ փոխադրու-
մանը հետեւի յուրաքանչյուր դազգյահի
աշխատանքի արտադրողականության բարձ-
րացումը : Այլապես ի՞նչ իմաստ ունի այդ
խտացումը : (Ծափահարություններ) :

Կարելի՞ յե տեքստիլ արդյունաբերության

մեջ բարձրացնել դազգյահի արտադրովամ-
կանությունը։ Իհարկե կարելի յե, և ո-
ռանձին ջուհակուհիներ հիանալի որինակ-
ներ են տալիս այդ ուղղությամբ։ Բայց
պետք ե, վոր մեր մանածաղործները հրա-
ժարվեն այն հայացքից, թե իրենց դազ-
գյահներն արդեն աշխատում են համարյա-
մինչև հնարավոր սահմանը։ Յես պետք ե
ասեմ, վոր այդ կարծիքը բավական տա-
րածված ե մանածաղործների ղեկավարնե-
րի մեջ։ Յեթե կարողանում են յուրաքան-
չյուր դազգյահի արտադրանքը հասցնել
105—110 տոկոսի, կարծում են, վոր իր
իրենց նորմաները շատ բարձր են, և այդ
մեծ նվաճում ե համարվում։ Իսկ յեթե
արագացքի դազգյահի շարժումը, ինչպես
անում են միքանի ձեռնարկություններում,
առանձին ջուհակուհիներ տալիս են մին-
չել 150 տոկոս արտադրանք։ Պետք ե ինչ-
պես հարկն ե աշխատել այդ գործի վրա և
հրաժարվել այն տրամադրություններից,
թե սարքավորումն աշխատում ե մինչ

հնարավոր սահմանը։ Յեթե այդ սարքա-
վորումը կարդին պահպի, և վերաց-
վեն անկանոնությունները կիսաֆարբեկատ-
ների, ոժանդակ նյութերի ու պահեստի
մասերի մատակարարման առավարեղում,
վորոնց չնորհիվ հսկայական պարապուրդ-
ներ են ստացվում, ապա մենք յուրաքան-
չյուր դազգյահից անպայման ավելի բարձր
արտադրողականություն կստանանք, քսոն
այժմ։ Ահա թե, ընկեր մանածաղործներ,
ուր պետք ե ուղղել ստախանության շար-
ժումը։ Դուք անպայման պետք ե անհա-
պար վերակառուցվեք այդ տեսակետից,
այն ժամանակ դուք իրավես կծավալնեք
ստախանության շարժումը և հետամնաց
արդյունարերությունից կդառնաք առաջա-
վոր։

Յես վերցրի տեքստիլ արդյունաբերու-
թյունը, բայց կարծում եմ, վոր պետք ե
քննել նաև արդյունաբերության մյուս բո-
լոր ճյուղերի պրակտիկան և հասնել ստա-

խանովյան շարժման իրական կաղմակերպ-
մանն ամենուրեք:

Ըստ Սերգոն արդեն ասաց, վոր նույ-
նիսկ Ծանր Արդյունաբերության ժողկոմա-
տը, վորն ընթանում է ժողովրդակ. տըն-
տեսության մյուս բոլոր ճյուղերի առջևից,
ունի ճյուղեր, վորոնք հետ են մնում ստա-
խանովյան շարժման ծավալման տեսակե-
տից, որինակ, նավթի, պղնձի, մասամբ
քիմիական, չինարարական արդյունաբե-
րությունը և այլն: Այդ ճյուղերում ստա-
խանովյան շարժման ծավալումը պետք
է հասուլ թափ ստանա, վորովհետեւ
նրանք նախ շատ կարեոր են, և յերկրորդ՝
այն պատճառով, վոր նրանք վոչնչով չեն
առհմանափակված՝ վոչ սարքավորման պա-
կասությամբ, վոչ նյութերով, վոչ հում-
քով:

Վերցնենք, որինակ, Անտառային ար-
դյունաբերության ժողկոմատը: Յես պետք
է առեմ, վոր ընկեր Լոբովը մի քիչ
բավատեսորեն զեկուցեց կենտկոմի պլենու-

մում: Անտառային արդյունաբերության
մեջ ստախանովյան շարժումը բավակա-
նաչափ չլի ծավալվել, և հարկավոր ե գեռ
շատ լուրջ աշխատել, վորտեսդի այդունող
կո առաջ մղվեն աշխատանքի ստախա-
նովյան մեթոդները: Անտառային արդյու-
նաբերության մի շարք տրեստներում պլա-
նի կատարման վոչ վատ ցուցանիչների հետ
միասին կան նաև այնպիսի տրեստներ, վո-
րոնք վատ են կատարում ծրագիրը: Այս-
պես, որինակ, նովոսիրեսկի տրեստը 11
ամսվա ընթացքում կատարեց ծրագրի
միայն 66 տոկոսը, Սվերդլովսկի տրեստը՝
74 տոկոսը, «Են-Լեսը»՝ 76 տոկոսը:
Զնայած թղթի արդյունաբերության մեջ
կան այնպիսի նշանավոր ստախանովական-
ներ, ինչպիսիք են Պրոնինները և այլն,
թղթի արդյունաբերությունն այնուամե-
նայնիվ հետ և մնում:

Յեթե ավելի ցածր ձեռնարկություններն
իջնենք, ապա ստախանովականների մեծ մա-
սը դանում է հիմնական արտադրող ցեխե-
րում և ավելի խորը՝ նախապատրաս-



տարկան ու պատրաստող ցեխերում։ Որինակ, մեքենաչինության ասպարեզում ստախանուվյան շարժումն ավելի շատ ընդդրկել և ջուլհակային ու մանվածքային նախապատրաստման ցեխերը։ Տեքստիլ արդյունաբերության մեջ այդ շարժումն ընդդրուկել և մշակման ցեխերը, և ավելի քիչ՝ ցեխերը և ավելի քիչ՝ նախապատրաստողները։ Յերկաթուղիներում ստախանուվյան շարժումը կենտրոնացած և գլխավորապես շողեքարշի աշխատողների, նորոգման դործարանների բանվորների մեջ և ավելի քիչ չափով, ինչպես արդեն ասաց ընկ. Կազմանովիչը, յերթեեկության և ուղու աշխատողների մեջ։

Ահա, որինակ, ըստ Լենինդրադի մարդարային կոմիտեյի հաղորդագրության, ինչպես և դրությունը մի շարք դործարաններում։ Ստալինի անվան դործարանում բոլոր բանվորների նկատմամբ ստախանովականների միջին թիվը կազմում է 12 տոկոս, իսկ ցեխերում—դարբնոցում՝ 36 տո-

կոս, ձուլարանում՝ 15 տոկոս, տուրբինային ցեխում՝ 7,7 տոկոս և հիդրոտուրբինային ցեխում՝ 7,5 տոկոս։ Վորովսկու անվան դործարանի հիմնական ցեխերում ստախանովականները կազմում են բանվորների 16,8 տոկոսը, իսկ ոժանդակ ցեխերում՝ միայն 3,9 տոկոսը։ Գեղաներկերի դործարանների հիմնական ցեխերում՝ 13 տոկոսը, իսկ ոժանդակ ցեխերում՝ 2,9 տոկոսը։ «Կրասնի Տրեուղոլնիկ» դործարանի հիմնական ցեխերում ստախանովականները կազմում են աշխատողների 18 տոկոսը, իսկ ոժանդակ ցեխերում՝ 11 տոկոսը։ Յես կարծում եմ, վոր այդ որինակները տիպիկ են մեր ամբողջ արդյունաբերության համար։

Ահա ձեզ ստախանովյան շարժման խայտարդետությունը ներքեռում՝ արտադրության մեջ։ Արդյոք այդ խայտարդետությունը հետադայում չի՞ խանդարի ստախանովյան շարժման ծավալման հաջողությանը։ Անտարակույս։ Յեթե նախապատ-

բաստող ցելիերը հետ մնան, նրանք կվիժեցնեն վերջնական մշակման ցելիերի դործը: Յեթե յերկաթուղում յերթևեկության և ուղու աշխատողները հետ մնան, դա կվոչնչացնի մեքենավարների ստախանովյան աշխատանքը, յեթե մանածագործները հետ մնան, կծախողնեն ջուլհակ ստախանովակաների աշխատանքը և այն: Յեվ այդպիսի ձախողումների որինակներն արդեն քիչ չեն: Ահա թե ինչու մեր խնդիրն ե՛ծ ծավալել ստախանովյան շարժումը արտադրության ամբողջ հոսանքում, բոլոր ողակներում, բանվորների բոլոր խմբերում՝ թե արտադրական և թե ոժանդակ բանվորների մեջ տնտեսության այն բոլոր ճյուղերում, վորոնք իրենց աշխատանքով սպասարկում են մյօւսների աշխատանքը: Այն ժամանակ ստախանովյան շարժումն ավելի մեծ թափ և ուժ կստանա:

Յես կրկնում եմ, իհարկե, հիմարություն և սիսալ կլիներ միանդամից պահանջել, վոր ստախանովյան շարժումն անպայման հա-

վառարաջափ ընթանա: Շարժման զարդացման սկզբնական շրջանում միանդամայն անխուսափելի յե այդ անհավասարաչափությունը: Սակայն այժմ մենք այդ շարժումը պետք ե այնպես կազմակերպենք, վոր այդ անհավասարաչափությունը վորքան կարելի յե փոքր լինի, վորովհետև նա սպառնում և ձախողել առաջ ընթացող ճյուղերի և բանվորների առանձին կատեգորիաների աշխատանքը:

Ի՞նչ ե ասում այդ անհավասարաչափությունն ու խայտարդետությունը: Նա սում ե, վոր տնտեսական ու կուսակցական կազմակերպությունները բավարար չափով չեն ղեկավարում ստախանովյան շարժումը, վոր ստախանովյան շարժումը բավականաչափ չի կազմակերպված: Ինչպիսի հզոր շարժում ել լինի, նա կարող ե հաջող զարդանալ միմիայն կազմակերպված լինելու ղեկավում, ամենորյա ղեկավարության ներքո: Խնդիրն այն ե, վոր ծավալնենք ստախանովյան շարժումը աթոտադրու-

թյան ամբողջ հոսանքում, նրա ամբողջ
 կոնվեյերում, բոլոր ճյուղերում: Իհարկե,
 խոսք անդամ չի կարող լինել լիակատար
 հալասարաչափության մասին: Այսուհետեւ
 ևս մեղ մոտ կլինեն առաջ գնացողներ և
 հետ մնացողներ, իսկ խոսքը վերաբերում է
 նրան, վոր առաջ քաշենք հետ մնացողնե-
 րին, վոր նրանց հետ մնալը չկարողանա
 ծախողել առաջ գնացողների աշխատանքը:
 Պարզ ե, վորքան ավելի շուտ ու յեռանդա-
 գին ձեռնամուխ լինեն մեր տնտեսավար-
 ները և կուսակցական կազմակերպություն-
 ները ստախանովյան շարժման ղեկավար-
 մանը, այնքան քիչ կլինի խայտարղետու-
 թյունը, այնքան ավելի հաջող առաջ կդնա
 նա:

ՆՈՐՄԱՆԵՐԻ ՑԵՎ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՄԽՍԻՆ

Յերկրորդ հարցը, վորի վրա յես կուղեյի
 կանդ առնել, նորմաների հարցն ե: Ընկեր
 Ստալինը ստախանովականների խորհր-

դակցությանն իր արտասահած ճառավ
 ասաց:

«Ներկայիս տեխնիկական նորմաներն ար-
 դեն չեն համապատասխանում իրականու-
 թյանը, նրանք հետ են մնացել և արգե-
 լակ են դարձել մեր արդյունաբերության
 համար, իսկ մեր արդյունաբերությունը
 չարգելակելու համար անհրաժեշտ ե փո-
 խարինել դրանք նոր, ավելի բարձր
 տեխնիկական նորմաներով: Նոր մաշ-
 դիկ, նոր ժամանակներ, — նոր տեխնի-
 կական նորմաներ»:

Այդ խորապես ճիշտ ե, նախ այն պատ-
 ճառով, վոր ստախանովականներն իրենց
 աշխատանքով արդեն կոտրեցին տեխնիկա-
 կան ներկա նորմաները, իսկ յերկրորդ՝
 այն պատճառով, վոր տեխնիկական ներկա
 նորմաներն արդեն հնացել են, վորովհետեւ
 վոչ-ստախանովական բանվորների հսկա-
 յական մեծամասնությունն ևս գերակատա-
 րում ե այդ նորմաները: Յես միայն մեկ
 յերկու տիպիկ որբինակներ կբերեմ այդ աե-

սակետից : ՀամԿ(բ)կ կենտկոմի արդյուն-
նաբերական բաժինն ստուգեց զանազան
տիպի արդյունաբերական 10 ձեռնարկու-
թյուն՝ իշորսկի գործարանը, կերովոկի,
Սորմովոյի, «Աերալ ի Մոլոտ» գործարա-
նը և այլն, վորոնք ընդգրկում են 35 հազ.
բանվոր : Այդ բոլոր ձեռնարկություննե-
րում սահմանված նորմաները գերակատա-
րում ե բանվորների 91 տոկոսը, իսկ առան-
ձին գործարաններում նորմաները գերակա-
տարում ե բանվորների 97 տոկոսը : Հարց
ե ծագում, ի՞նչ և մնում ուրեմն այդ նոր-
մաններից : Նախ, նրանք արդեն փաստորեն
վերացվել են ստախանովականների կողմէց,
վորոնք յեռապատիկ և ավելի անգամ դե-
րակատարում են նորմաները, յերկրորդ
այդպիսի նորմաները նշանակում են վորև
նորմայի բացակայություն, յերրորդ, նոր-
նորմաները պարզապես հնացել են : Մեծ
թվով գործարաններում նորմաների զգացի
մասը սահմանվել ե զեռ յերկու տարի և
ավելի առաջ : Ահա որինակ, № 42 դորժա-

բանում նորմաների ընդհանուր թվից 63
տոկոսը սահմանվել է մինչև 1934 թվա-
կանը, այսինքն յերկու տարի առաջ և մի-
այն 35 տոկոսը սահմանվել է 1934 և 1935
թվականներին : Իսկ այդ ժամանակամիջու-
ցում նույն գործարանում տեխնիկական
խոշորագույն փոփոխություններ են կա-
տարվել թե՛ սարքավորման մեջ և թե՛ տր-
ատագրության տեխնոլոգիական պրոցեսում :
Նշանակում ե, ներկա նորմաներն անախոր-
նիզմ են դարձել, դարձել են մի արդելակ
արդյունաբերության առաջնթացի համար :
Ահա թե ինչու ներկա նորմաները պետք ե
վերանայվեն և փոխարինվեն նոր նորմանե-
րով :

Ենի այդ թերևս ամենահիմնական և ա-
մենաբարդ հարցն ե ստախանովյան շարժ-
ման կազմակերպման մեջ : Վերջին հաշվով
ստախանովյան շարժման վորակական ամե-
նակարեռ արդյունքը նոր նորմաների ան-
ցընելն է : Տնտեսության բոլոր ճյուղերը,
բալոր ձեռնարկությունները պետք ե անհա-

պաղ անցնեն այդ մեծ գործի պրակտիկ
նախապատրաստմանը, վորովհետև նորմա-
ների վերանայման հաջողությունն ամբող-
ջովին կախված կլինի մեր նախապատրաս-
տութիւց :

Նորմաների վերանայման կազակցու-
թյամբ յես կուղեյի նախ և առաջ միքանի
խոսք ասել նորմավորման հին պրակտիկո-
յի թերությունների մասին, վորպեսի
մենք, համենայն դեպս, նոր աշխատան-
քում չկրկնենք այդ հին պրակտիկան :
Վորն և նորմաներ սահմանելու հին սխո-
տեմի հիմնական թերությունը : Նախ և ա-
ռաջ հին նորմաները սահմանելիս յելակետ
եյին ունենում այն, վոր լուսանկարում և-
յին աշխատանքի ամբողջ վիճակը, նրա բո-
լոր թերություններով, —պարապուրդնե-
րով, ամեն տեսակ ոժանդակ ոպերացիանե-
րով, և այդ ամենը մտցվում եր նորմայի
մեջ : Ուստի հին նորման հաճախ առաջ չեր
մղում արտադրությունը և հանդիսանուա

եր ձեռնարկության մեջ արտադրության
կազմակերպման բոլոր թերությունների
սոսկ արտացոլումը : Արդյոք կարո՞ղ ենք
մենք այժմ նոր նորմաների մեջ մտցնել
այդ բոլոր պարապուրդները, սարքավոր-
ման սխալ և վոչ-լրիվ ոգտագործումը և
այլն : Վոչ մի դեպքում : Ստախանովական-
ները մեզ հրաշալի դեղատոմներ են տա-
լիս, թե ինչպես պետք և կառուցել նոր
նորմաները :

Թերկրորդ թերությունը, —նորման, վոր-
պես կանոն, համապատասխան եյլին դարձ-
նում վոչ թե այն բանին, թե մարդը վոր-
քան կարող և արտադրել, այլ գլխավորա-
պես այն բանին, վոր աշխատավարձը
չի ջեցվի : Կարո՞ղ ենք արդյոք մենք այժմ
յենել դրանից : Իհարկե վոչ : Պարզ և վոր
այժմ վոչ մի խոսք չի կարող լինել աշխա-
տավարձն իջեցնելու մասին : Ընդհակառա-
կը, աշխատավարձն ավելանալու յե ստա-
խանովայան շարժման կապակցությամբ :
Ուստի և նորմանորման ամբողջ պրակտի-

կան հարկավոր և շուռ տալ այնպես, վոր
յելակես հանդիսանա հետեյալը վո՞րքան
կարող և արտադրել բանվորը արտադրու-
թյան կաղմակերպման, ամեն տեսակ ու-
րապուրդների կրծատման, աշխատանքի
ավելի ճիշտ բաժանման և բանվորի կողմից
եր գործի տեխնիկան գիտենալու առաջ-
վանից ավելի լավ պայմաններում:

Հին նորմաներ սահմանելու յերրորդ թե-
րությունն այն եւ, վոր նորմաները սահ-
մանվում եյին, իսկ հետո նույն նորմաները
հաճախ վերանայվում եյին: Ինչու եյին
վերանայվում: Վորովհետեւ նրանց վորակը
վատ եր: Զեռնարկություններում շատ եր
տարածված հետեյալ պրակտիկան. հենց
վոր բանվորը դուրս եր դալիս վորոշ սահ-
մանից, իջեցնում եյին գնահատումը և
սահմանում եյին նոր նորմա: Այդպիսի
խառնաշփոթությունը չեր կարող, իհարկե,
չարգելակել աշխատանքի արտադրողակա-
նության աճումը: Այժմ ստախանովական-
ներն այդ բոլորը կոտրեցին:

Ոհա թե ինչու նոր նորմաներ սահմանե-
լիս պետք եւ ձգտել, վոր նրանք իրենց վո-
րակով հաճախակի վերանայում չպահան-
ջեն, այլ գործեն յերկար ժամանակ և դրա-
նով իսկ չսահմանափակեն աշխատանքի ար-
տադրողականության աճումը: Ինչի՞ց եւ
կախված նորմաների լավորակությունը:
Նախ և առաջ նրանից, թե ո՞վ և մշակում
ու սահմանում այդ նորմաները: Մինչև
այժմ վաստորեն ո՞ւմ ձեռքումն եւ գտնվում
նորմաների մշակումը: Յես կարծում եմ,
վոր սիսալված չեմ լինի, յեթե ասեմ՝
ձեռնարկության ամբողջ աշխատանքը վո-
րոշող այդ կարևորագույն գործը գործա-
րանում վաստորեն կենտրոնացված եւ ան-
պատասխանատու, իսկ հաճախ կիսադրա-
գետ, յերկրորդական անձերի ձեռքին:

Սարգիսով—Ճիշտ եւ:

Անդրեյել—Այնպիսի մարդկանց ձեռ-
քին, վորոնք վոչ մի անմիջական առնչու-
թյուն չեն ունեցել ցեխի ու ձեռնարկու-

թյան ղեկավարման հետ,—այսպես կոշ-
ված նորմավորողների ձեռքին:

Բուլղյոննի—ձիշտ ե:

Անդրեյեվ—իսկ ինժեներները և ցեխերի
ղեկավարները միմիայն ստորագրում և ձե-
վականորեն կնքում եյին այդ նորմաները:
Յես պետք է փաստական տեղեկանք բերեմ,
թե ի՞նչ են ներկայացնում այդ նորմավո-
րողները՝ իրենց տեխնիկական մակար-
դակով: Ահա նույնիսկ մեր առաջավոր մե-
քենաշինական գործարաններում, 21 և
22 գործարաններում, 267 նորմավորողնե-
րից միայն 22-ն ինժեներ են, դրա փոխա-
րեն 151 հոգի վոչ մի մասնագիտական պատ-
րաստություն չունեն, իսկ 8 հոգի նույնիսկ
հանրակրթական պատրաստություն չունեն,
այսինքն բացարձակապես կիսագրագետ
մարդիկ են: Ահա մի այլ որինակ ևս: Մե-
քենաշինական արդյունաբերության 12 հազ.
նորմավորողներից ինժեներներ են մըայն
400 հոգի, այսինքն մոտ 3 տոկ., տեխնիկ-
ները 2200 հոգի յեն, այսինքն մոտ 20 տո-

կոսը, իսկ 9000 հոդի, այսինքն բոլոր նոր-
մավորողների 76 տոկոսը, տեխնիկական
վոչ մի կրթություն չունի, և հաճախ բոլո-
րովին կիսագրագետ մարդիկ են: Մինչդեռ
փաստորեն այդ մարդկանց ձեռքումն ե
գտնվում նորմավորման ամբողջ գործը մեր
ձեռնարկություններում: Վերըն հաշվով
նորման հիմնականն ե: Առանձին անհատա-
կան նորմաներից կազմվում ե մեր տնտե-
սական ամբողջ պլանը և այդ հիմնականը
մինչև այժմ գտնվում ե յերկրորդական,
հաճախ կիսագրագետ մարդկանց ձեռքում:

Կարո՞ղ ենք արգելոք մենք այսուհետև ևս
այդպես շարունակել գործը: Իհարկե վոչ:
Պարզ ե, վոր նորմավորումը պետք ե գլո-
նըլի արտադրության անմիջական դեկա-
վարների ձեռքում՝ ցեխում—վարպետի,
ցեխի պետի ձեռքում, իսկ ամբողջ ձեռ-
նարկության մեջ—դիրեկտորի ձեռքում:
Նրանք պետք ե անձամբ սահմանեն նորմա-
ները, իսկ զիրեկտորները պետք ե քննեն
այդ նորմաներն ըստ եյության և հաս-

Մատեն։ Յեխերի պետերը վրապես իրենց
ողնական պետք ե ընտրեն ամենավորակյալ,
տեխնիկակես դրագես մարդկանց և, վոր
դլխավորն ե, նորմաների վերանայման
ամբողջ գործին մասնակից դարձնեն ստա-
խանովականներին։ Ահա այն ժամանակ մենք
կունենանք իսկական լավորակ, սոցիալիս-
տական նորմաներ։

Ահա թե ինչպիսի դլխավոր թերությունն-
ներ կային մեզ մոտ հին նորմավորման բը-
նագավառում և ինչից մենք անպայման
պետք ե խուսափենք նորմաների վերանայ-
ման մեր առաջիկա պրակտիկայում։ Պարզ
է, վոր նորմավորման վերաբերյալ բոլոր
աեղեկագրերը պետք ե դեն զցվեն, վորպես
մի խլամ, վորը վոչ մի դեպքում մեղ չի
ողնի, այլ կիսանդրաբի։

Որզոնիկիձե—Պետք ե այլել։ (Ծափահա-
րություններ)։

Անդրեյեվ—Ճիշտ ե, ընկեր Սերդո, դրա-
նից պետք ե սկսել նորմավորման գործը,
իսկ նրա հիմքը պետք ե կազմեն ստախա-

նովյան աշխատանքի վորձը և ստախանո-
վականների մեթոդները։

Ստախանովյան աշխատանքի մեթոդները
շատ հասարակ, պարզ մեթոդներ են և նը-
րանց մեջ վոչ մի տասնձին գաղտնիք չկա։
Այժմ ամենուրեք ստախանովյան գաղտնիք չկա։
Ստախանովյան մեթոդները ստախանովա-
կանի Փիլիկական ուժերի ծայրահեղ ըար-
ման մեթոդներ չեն։

Կագանովիչ—Ճիշտ ե։

Անդրեյեվ—Աքտասահմանում ամեն մի
գաղաղած սրիկա, մասնավորպատես Գերմա-
նիայի Փաշխտական մամուլը, ստախանով-
յան շարժման հաջողությունների առթիվ
հասնում ե տիմարության գոհաբների,
մինչև իսկ պնդելով, թե մենք իբրև թե
ընտրել ենք հոկաններին՝ մկանուտ մարդ-
կանց, վորոնք կարող են ապահովել մեծ
արտադրամք, և առաջ ենք զցել նրանց՝
մյուսներին դրդելու համար։ Ավելի հիմար
ի՞նչ կարող ե լինել, քան ինչ պնդում են
տյդ մարդիկ, վորոնք մեր հաջողություն-

Ների առթիվ խեղդվում են զաղանային կա-
տաղությունից :

Բուդյոննի—Ճիշտ ե:

Որջոնիկիձե—Ճիշտ ե:

Անդրեյեվ—Մեր ստախանովական հար-
յուր հաղարավոր բանվորները այժմ նոր-
ման գերակատարում են հաճախ հինգ,
տասն անգամ : Ի՞նչ մեթոդներով են հաս-
նում նրանք այդ բանին : Նախ և առաջ ի-
րենց գործի տեխնիկան գիտենալով : Նախ և
առաջ նրանով, վոր նրանք տիրապետել են
տեխնիկային, նրանք գիտեն մեքենան,
գիտեն, թե ինչպես ե չնչում նա, ինչ թե-
րություններ ունի նա և այլն :

Յերկրորդ՝ ստախանովյան արտադրողա-
կանությունը ձեռք է բերվում աշխատանքի
ավելի մեծ բաժանումով, այսինքն՝ հիմնա-
կան արտադրական ֆունկցիաներն ոժան-
դակ ֆունկցիաներից անջառելով, վորա-
կյալ բանվորներին կենարոնացնելով ար-
տադրական ֆունկցիաների վրա, նրանով,
վոր այժմ նրանք նյութ, գործիք ստանա-

լու, սմբայցնելու ամեն մի ոժանդակ աշ-
խատանք չեն կատարում, այլ գրա համար
նշանակված են այլ բանվորներ : Իսկ սուա-
խանովական բանվորներն ամբողջովին բզ-
բաղված են իրենց ուղղակի աշխատանքով՝
հանգահորում, գաղտյահի կամ մուրճի
մոռ :

Յերրորդ՝ ստախանովյան արտադրողա-
կանությունը ձեռք է բերվում մեխանիզմ-
ների պարապուրդները կրծառելով : Զոր-
րորդ՝ նրանով, վոր այդ մեխանիզմներն
ավելի արագ են աշխատում, կատարում են
ավելի մեծ թվով պտույտներ կամ ոգտա-
կար շարժումներ, ինչին ստախանովական-
ները հասնում են ամեն տեսակ հավելյալ
հարմարանքով, առնենահասարակ մեքենա-
յացումով և աշխատանքում իրենց ցուցա-
րերած ճարագիկությամբ, ովմիկությամբ,
և հինգերորդ՝ նրանով, վոր ստախանովա-
կանը կանոնավոր կիրառով և ժմոմանակին
ապահովվում է նյութերով, նախադրու-
րաստված արտադրանքով, նրանով, վոր

ստախանովականն , որինակ , մետաղի մշակ-
ման բնագավառում մշտապես իր ձեռքի
տակ ունի պահեստի կարգին դործիքներ ,
պահեստի կտրիչներ և այլն , մի ըսն , վոր
բացառում և հազկավզյալ , վոչ արտադրու-
գական պարապուրդները :

Ահա , ընկերներ , ստախանովյան մեթոդ-
ների ամբողջ խմասությունը : Ավելի ակ-
նառու գարձնելու համար յես մի քանի տի-
պիկ որինակներ կրերեմ առանձին ստախա-
նովականների պրակտիկայից :

Ստախանովականների հաջողության դադա-
նիքը—ամերիկյան լրագույն նորմանե-
րի գերազանցման հանապարհը—ամենից
լավ բնորոշվում և շտամպելու պրացեսի
պահանջած աշխատանքային ժամանակի այն
լուսանկարով , վորը հանված և մինչև ստա-
խանովյան շարժումը՝ 1934 թվականին և
1935 թ . Հոկտեմբերին «ГАЗ» վործարա-
նի գարբնոցում : Հերթափոխության աշ-
խատանքի կառուցվածքը բնորոշվում և հե-
տեւալ տվյալներով ,— բուհ շտամպումը

այն ժամանակ գրավում եր աշխատանքային
ժամանակի 46 տոկոսը , այժմ՝ 86 տոկոսը :
Մեքենան կարգի բերելու և նորոգելու
համար առաջ ծախովում եր աշխատանքա-
յին ժամանակի 18 տոկոսը , այժմ՝ 9 տո-
կոսը : Տաքանալուն սպասելն այն ժամա-
նակ խլում եր ժամանակի 24 տոկոսը , այժմ՝
0 : Պարապուրդ՝ բանվորների մեղքով՝
այն ժամանակ 8 տոկոս , այժմ 0 : Այլք՝
այն ժամանակ 4 տոկոս , այժմ՝ 0 :

Դազգյահաշխնության տսպարեղում : Այդ
տեսակետից ցայտում պատկեր և տալիս
դազգյահների Որշոնիկիձեյի անվան գոր-
ծարանի չքանչանակիր Փրեկերովչչելի ըն-
կեր Գուղովի աշխատանքը : Մասնավորա-
պես նրա վերջին ռեկորդը № 372,028 գե-
տալի վրա ,—ռեկորդերային դազգյահի ա-
րագության տուփի ներսի վականի կավա-
րեցը ,—վորը տեխնիկական նորմավորման
բյուջեյի հատային ժամանակային նորմա-
յով պահանջում և 8,5 բոպե , և նախա-
գծային նորմայով 6,6 բոպե , իսկ ընկեր

Գուղովը սպատառատեց 0,6 բուղեյում : Դը-
րամով իսկ ընկեր Գուղովը նորման կատա-
րեց 1.430 տոկոսով :

Արտադրական նորմաների բարձրացման
ուղիներն ամենից լավ բնորոշվում են ըն-
կեր Գուղովի աշխատանքի փաստական ու-
ժմը տեխնիկական նորմավորման բյուրոյի
և նորմագծի նորմաների հետ համապեկիս,
վոր ցուց և տալիս հետեւյու աղյուսակը .

Ծերվալվերային դազզյահի ներսի փականի
կափարիչ պատրաստելու նախագծված
ու փաստական հատային ժամանակի տղ-
յուսակը

	Զարգություն նորմանական ժամանակը	Գուղովը նորման ժամանակը	Փաստական ժամանակը	Ժամանակը գուղովում
1. Լրացուցիչ ժամանակը	2,1	0,86	0,0	
2. Ոժանդակ ժամանակը	1,0	1,5	0,1	
3. Մեքենայի աշխատելու ժամանակը	3,5	6,14	0,5	
Հատային ժամանակը գուղովը	6,6	8,50	0,6	

Ընկեր Գուղովը մշակման պրոցե-
սի տեխնոլոգիան՝

ա) Աշխատում է յերկու Փրեղերով՝ մեկի
փոխարեն, բ) միաժամանակ վեց դետալ և
զնում (ներսի փականի կափարիչ) մեկի
փոխարեն, աշխատում է կտրիչի 34 մետր
արագությամբ մի բուղեյում, փոխանակ
նորմայով նախատեսված՝ մի բուղեյում 20
մետրի:

Ընկեր Յա. Պ. Բելիսը պարզեատրված ե
Աշխատանքային կարմիր Դրոշի շքանշա-
նով: Նա Կիրովի անվան դորձարանի 4-ըդ-
կառողի տաշող է: Նորման կատարում է
280-300 տոկոսվ: Տաշող «Բուղեր» դադ-
դահնի վրա նաև տաշում և մոտորի կմարտքի
բեկոները: Ամերիկայի «Զիի» գործարա-
նում այդ դետալը պատրաստելու համար
արգում է 18 ժամ ժամանակ, Անգլիայի
«Մետրո-Վիկերս» գործարանում՝ 11 ժամ:

Կիրովի անվան դորձարանում 1934 թվակա-
նի բուղովը անվան դորձարանում՝

նին նորման կազմում եր 18 ժամ, իսկ
կարծր ճուղլածքներից պատրաստված կըս-
բիչներ մտցվելուց հետո՝ 1935 թվականին
նորման սահմանվեց 12 ժամ 50 րոպե: Բն-
կեր Բելիխը մոտորի կմախքը տաշելու հա-
մար ծախոսում ե միայն 4 ժամ 30 րոպե:
Նա այդ արդյունքին հասավ, ավելացնե-
լով դազգյահի արագությունը, փոխելով
կարիչի ձևը և մտցնելով նոր ոպերացիոն
դիմավոր բենուում ֆաղկան հանելու դոր-
ծում առաջարկելով կիրառել ձեւվոր
կտրիչ: Ընկեր Բելիխը շատ լավ է ուսում-
նասիրել իր դազգյահը, գործիքները և
տեխնոլոգիական ամբողջ սլրոցեսը: Նա կո-
րողացավ միջոցներ ձեռք առնել, վոր դաշ-
դյահի համար պատրաստվի կտրիչների
յերկու կոմպլեկտ: Ընկեր Բելիխը կիրավի
ամուլան գործարանում աշխատում ե 1935
թվի մայիսի 22-ից: Գործարան և մտել
վորպես սևագործ բանվոր, ապա վորպես
աշակերտ փոխադրվել ե «Բուտեր» սիս-

տեմի առաջն դադլյահի վրա: Հունիս
ամսոի վերջերից վոխադրվել ե նույն դադ-
դյահի վրա ինքնուրույն աշխատանք կա-
տարելու:

Քիմիական գործարանի բանվոր լնկեր
գնեղինը սահմանեց հիմնական պրադուկտ-
ների ավելի ճիշտ փոխարարերություն,
վորի չնորհիվ վերացվեցին միջանրկյալ յիր-
կու Փիլարացիաները. կրծատեց ռեակցիա-
յի տեսողությունը, ավելացրեց քիմիական
պրոդուկտի արտադրանքը՝ 24 ժամում՝ 538
կիլորամի փոխարեն հասցրեց 2512 կի-
լոգրամի:

Անգամային արդյունաբերության առավա-
րելում բանվոր քտոր լնկեր Զէկրակովը
(Կոնցլապոժի անտառային կետ) իր դաշ-
դյահը հարմարեցրել ե իր հասակին, ձեռ-
քի տակ ունի վոչ թե մեկ, այլ յերկու յե-
րեք լավ սրած դանակ, իսկ ճյուղերը կըտ-
րելու համար, ավելի քիչ ջանք գործա-
դրելու նպատակով, գործածում ե փոքր
կացին, բացի գրանից, նա գոլորշիավ

կասիկացնում և վայրաը, յերբ նու սպառած
ե, և դրանով 5—6 անգամ ավելացնում և
իր արտադրանքը՝ նորմայի հանդեպ:

Փայտահատ ընկեր Ստեղանովը (Խվոյ-
նենսկու անտառամեքենայական կարյան),
աշխատելով աղեղնացին սղոցով, սկսեց
որական տալ 25 խորանարդ մետր՝ նախա-
տեսված 6 խորանարդ մետր նորմայի փո-
խարեն: Զնայած դրան, աղեղնացին սղոց-
ները չառ վատ են մտցվում պրակտիկայի
մեջ, տրեսուները և անտառարդյօւնարե-
րական անտեսությունները չեն սէտակոր-
ծում արդեն իրենց տրամադրություն տակ
դանվող սղոցները: Այսպիս, որինակ, ու
լու » տրեսուում կա 12 հազար աղեղնա-
ցին սղոց, իսկ աշխատում և միայն 3 հա-
զարը, դրանք ել մտցվել են Յերկրացին
կոմիտեյի ճնշումով:

Բայց ահա թե ինչ ե պատմում կառուցող
բանվոր՝ արմատուրչչիկ ընկեր Բուրինը.
«Առաջ արմատուրան կորացնում ելին վե-
րադիր բանալիով. դա բարդ գործ եր, իսկ

յես պատրաստեցի այլ սիստեմի մի բո-
նութի: Այդպիսի բանալի կիրառելու չնոր-
հիվ արտադրման նորման հասավ 150 տո-
կութիւնի: Յես պատրաստեցի նաև մի ճեռքի
գաղղյահ՝ ձեւավոր, ցանցեր հյուսնելու հա-
մար, վորով արտադրողականությունն ա-
վելացվեց մինչև 250—300 տոկոսով:

Ընկեր Սուլարիկովն աշխատում և վոտ-
նամանների «Պարխմակայա Կոմունա» գոր-
ծարանում վորովես ներքան կարող 8-րդ
կարգի Փրեզերովչչիկ: Ընկ. Սուլարիկովի
աշխատանքում հիմնականն այն ե, վոր
նա մրոխեց Փրեզերի սրումը: Ֆրեզերների
աշխատանքը, Փրեզերը նբա յեղանակով
սրելիս, համարյա վոչ մի լարսում չի պա-
հանջում բանվորից և մեծ չափով բարձրա-
ցնում և արտադրողականությունը: Ընկեր
Սուլարիկովը ներքանի կարվածքը Փրեզե-
րու պրոցեսը կատարում և յերեք սրումտով
և համապատասխանություն յերեք անգամ
բոնում և ճեռքով վոտնամանը, մինչդեռ
մյուսները բանում են 5—6 անգամ, կրկնե-

լով կարելը միենույն տեղում։ Դրս ջնար-
հիլ Սուլտարիկովը մի վոտնաման ֆրեզելու
համար ծախսում է 9,9 վայրկյան, մինչ-
դեռ մյուս բանվորները, մինչև նրա մե-
թովը կիրառելլը, ծախսում ենին 22,7 վայր-
կյան։ Նորման 300 զույգ վատնաման լինե-
լով, նա տալիս է 780—850 զույգ։

Կունցեվյան կամվոլային գործարանի
ջուկհակ Մարտուսյան Զեկումովյան 2 դադ-
դշահից անցավ 8 դադդյահի։ Շնորհիվ այն
հանդամանքի, վոր ցեխի պետ Յերոֆեյիլին
իրականացրեց Զեկումովյայի առաջարկնե-
րը, — որինակ՝ լծակի կոնստրուկցիան
փոխելը, վորը հնարավորություն և տա-
լիս ավելի արագ շարժում կատարելու
մարզրուսով, շարժիչ փոկի լվանալն ու
մաքրումը, վորով նվազեց սահումը, բացի
դրանից, դադդյահների արագությունը մի
բովելում 130-ից մինչև 145 հարվածի
հափցնելը և մաքոքի վրա թելի շատացումը
— Զեկումովյան 8 դադդյահի վրա որական

աբանավորում և 172 մետր՝ յերկու դադդյա-
հով 40 մետր արտադրելու փոխարեն։

Ինչպես տեսնում եք, դրանք, ստախո-
նովյան այդ մեթոդները շատ պարզ են,
բայց միենույն ժամանակ յետ պետք է ա-
սեմ, վոր, չնայած ամբողջ պարզության,
նրանք պահանջում են արմապական վափո-
խություն մտցնել մեր ձեռնարկություննե-
րի արտադրության ամբողջ կարմակերպ-
ման մեջ՝ արտադրության տեխնոլոգիա-
կան պրոցեսը փոխելու իմաստով, պահան-
ջում են փոխել ձեռնարկություններում
տեխնիկական պլանավորումը, փոխել
այնպես, վոր մեկը մյուսից հետ չմնա,
վոր մեկը ճշտիվ համապատասխանի մյու-
սին։ Աշխատանքի ստախանովյան մեթոդ-
ները պահանջում են ապահովել հումքի,
կիսաֆարբիկատների, եներգիայի կանո-
նավոր, անխափան մատակարարումը, պա-
հանջում են մշտագետ մաքուր ու կարգին
պահել սարքավորումը, ունենալ կարգին
գործիքների ու պահեստի մասերի պաշտ,

բառելավել մշակելու համար արվող կիսաբարիկատների, ուժանդակ նյութերի վրակը և այլն։ Վորքան ալելի չուտ ապահովվի մեղ մոտ արտադրության կազմակերպումը փոխելու այդ աշխատանքը, այնքան հաջող կերպով կկատարվի տեխնիկական ավելի բարձր նորմաներին անցնելը, այնքան ավելի լայն ու խորը կծավալվի մեղ մոտ ստախանովյան շարժումը։

Յերկրորդ հարցը, վորի լուծումը պետք է ապահովվի նոր, ավելի բարձր տեխնիկական նորմաներին անցնելը և ավելի ծավալվի ստախանովյան շարժումը, բանվորների տեխնիկական ուսուցման հարցն և։ Վորքան յեռանդուն զբաղվենք մենք այդ գործով, այնքան հաջողությամբ կանցնենք տեխնիկական նոր նորմաներին — այդ և վկայում ստախանովյան շարժման ամբողջ մորդը։ Այժմ ստախանովյական և ուզում դառնալ բանվորների հակայական մեծամասնությունը։ Դա փաստ է։ Հենց այդ և ստախանովյան շարժման բացառիկ հաղ-

թանակը։ Ստախանովյական կարող ե դառնալ ամեն մի բանվոր, ինչպես միանդամայն ճիշտ սաաց ընկեր Ստալինը։ Անողայման միայն մեծ արտադրական ստաժ ունեցող բանվորը չե, վոր կարող ե ստախանովյական լինել. ստախանովյական կարող ե դառնալ ամեն մի բանվոր, նույնիսկ նա, ով միայն նոր և յեկել կոլտնաեսությունից։ Այդ են վկայում բազմաթիվ փաստերը։ Յես կարող ելի բազմաթիվ որինակներ բերել այդ սեսակետից, յերբ մարդը միայն մի տարի առաջ և յեկել գործարան, կամ հանքահոր, մի քիչ սովորել և, անցել և դաղդյահի աշխատանքին և այժմ ստալին և միքանի անդամ ավելի մեծ նորմա, քան չին վորակալ բանվորը։ Նշանուկում և, ստախանովյական կարող ե դառնալ յուրաքանչյուր բանվոր, բայց դրա համար անհրաժեշտ պայման և սովորել տեխնիկական, ակրապետել իր գործի տեխնիկային։

Զայներ—Ճիշտ և։

Անդրեյեվ—Ահա թե ինչու մեր տքն-

ունսական ու կուսակցական կազմակերպությունները պետք եւ ամբողջ թափոլ ծավալն այդ աշխատանքը։ Այս, ինչ վոր արվել եւ մինչև այժմ և արվում եւ ներկայումը, պետք եւ անբավարար համարել։ Յուրաքանչյուր ձեռնարկության մեջ պետք եւ ավելի լայն, ավելի լուրջ հիմքի վրա դնել բանվորների տեխնիկական ուսուցումը։

Հաջորդ հարցը, վորի վրա յես կուղեցի կանգ առնել, դա աշխատավարձի հարցն ե։ Ստախոնովյան շարժման առջև ավելի լայն ճանապարհ բանալու համար հարկավոր ե աշխատավարձի ասպարեզում վորքան կարելի յե չուտով վերջ տալ նրա այն հետամնաց ձևերին, վորոնք շարունակում են կաշկանդել ստախոնովյան շարժումը և աշխատանքի արտադրութականության հետապա աճումը։ Յեթե, որինակի համար, համեմատենք աշխատավարձի զանազան սիստեմ ունեցող առանձին ձևունարկություններ, ապա կստանանք ուղղակի առշեցուցիչ մի պատկեր, ուղղակի որենք,

վոր այնտեղ, վորտեղ գոյություն ունի պլոտիեսիլ և անհատական գործավարձային վարձատրություն, այնտեղ, վորտես կանոն, ստախանովյան շարժումն ավելի մեծ ծավալ ունի, այնտեղ նա առաջ եւ գնում։

Զայներ— Ճիշտ ե։

Անդրեյեվ— Իսկ այնտեղ, վորտեղ գործյուն ունի ժամանակավարձ, կամ բրիգադային, աղլենգատային գործավարձ, այսինքն՝ դիմազուրկ գործավարձ, այնաև ստախանովյան շարժումը դանդաղ եղարկանում։

Կազմանովիչ — Ճիշտ ե։

Անդրեյեվ — Իսկ յեթե այդ ճիշտ ե, մենք պետք եւ վորքան կարելի յե չուտով վերջ տանք աշխատավարձի այդ հետամնաց ձևերին և այն ժամանակ ստախոնովյան շարժումն եւ ավելի արագ առաջ կընա։ (Ծափահարություններ)։

Յես պետք եւ նորից անհանդատացնեմ ընկեր մանածագործներին։ Պատահակա-

նություն չե, վոր տեքստիլ արդյունաբերության մեջ աշխատանքի արտադրողականությունը շատ ցածր ե: Ինչո՞ւ: Այս պատճառով, վոր այնտեղ աշխատավարձի գործը ճիշտ չե դրված: Այնտեղ մինչեւ այժմ ել դոյրություն ունի պլրոդրեսիլ վարձատրություն նորմաների ներսում, այնպիսի պլրոդրեսիլ վարձատրություն, վորը բանվորների աշխատավարձը բարձրացնում ե արդեն այն դեպքում, յերբ նա անցել ե իր նորմայի 80 տոկոսից, իսկ 100 տոկոսից ավելի արտադրելու դեպքում պլրոդրեսիլ վարձատրությունը չի աճում, նա կանդ ե առնում: Դա ի՞նչ պլրոդրեսիլ վարձատրություն ե: Զե՞ վոր դա փաստունքն վերացնում ե արտադրական պլանը: Կարելի յե հավաստիորեն ասել, վոր հատկապես աշխատավարձի այդ սիստեմն ուղղակի ճակատագրական դեր խաղաց տեքստիլ արդյունաբերության մեջ՝ դադոյանեների արտադրողականությունը բարձրացնելու իմաստով: (Զայնել. — Ճիշտ ե):

Նու կաշկանդում ե դազդյահների ու բանվորների արտադրողականությունը, գրահամար ել մանածագործներն արտադրողականության այդպիսի ցածր մակարդակի վրա յեն դանվում: Համեմատած արդյունաբերության մյուս ճյուղերի հետ: Յեկդուք, ընկեր մանածագործներ, պետք ե հրաժարվեք այդ արխայիկ սիստեմից ու անցնեք իսկական պլրոդրեսիլ վարձատրություն ունեն նաև մյուս ճյուղերում և նույնարկն ե կրաքարացնեք արտադրողականությունը ձեր արդյունաբերության մեջ: Արդյոք միայն մանածագործների՞ մոտ գոյություն ունեն աշխատավարձի հետամիաց ձեւեր: Իհարկե, վոչ: Դրանք դոյրություն ունեն նաև մյուս ճյուղերում և նույնիսկ մեքենաշինության մեջ: Նշանակում ե, պետք ե քննել քոլոր ճյուղերն ու ձեռնաբարկությունները և ավելի արագորեն անցնել աշխատավարձի հետամիաց ու աշխատանքի արտադրողականությունն արգելակող ձեւերից անհաստական պլրոդրեսիլ

գործավարձային վարձատրության։ Այդ
փորձը մենք ունենք։ Պետք է միայն դիմել
մեր ծանր արդյունաբերության, մետաղա-
ծուլման ու քարածուխի լավ որինակներին։
Այնտեղ վոչ մի առանձին յուրահատուկ
պայմաններ չկան։ Մենք նրանց փորձը հա-
ջողությամբ կարող ենք փոխադրել ար-
տադրության մյուս բոլոր ճյուղերը։ Յել
վորքան արագ կատարենք այդ, այնքան
ավելի արագ առաջ կդնա ստախանովյան
շարժումը գեպի աշխատանքի արտադրո-
ղականության նորանոր բարձունքները։

Իւժեներւերն ՈՒ ՏԵԽՆԻԿԱՆԵՐԸ ԶՊԵՏՔ Է ՀԵՏ ՄՆԱՆ
ՍՏԱԽԱՆՈՎՅԱՆ ՇԱՐԺՈՒՄԻՑ

Առայժմ դեռ ի՞նչն է կաշկանդում ստա-
խանովյան շարժումը։ Այն, վոր ինժենե-
րատեխնիկական կազմի դեռ զգալի մասն
ստախանովյան շարժման հետ համարվալ
չի ընթանում։ Յես պետք է ուղղակի ա-
ռամ, վոր այստեղ կենարոնական կոմիտե-

յի պլենումում հանդեռ յեկող առանձին
ընկերներ վորոց չափով դեղադարդում,
չափաղանց լավատեսորեն եյին գնահատում
տեխնիկական կազմի մասնակցությունն
ստախանովյան շարժմանը։ (Զայներ —
Ճիշտ ե)։ Յես դանում եմ, վոր ընկ։ Ու-
ջոնիկիձեն ճիշտ եր ասում, թե՝ վորտեղ
ինժեներները համարվայլ են ընթանում
ստախանովյան շարժման հետ, այնտեղ
ուղղակի հրաշքներ են կատարվում։ Բայց
դորձն այնպիսի վիճակի մեջ ե, վոր նշա-
նակալից փաստերի հետ միասին, յերբ
տնտեսության մի շարք ճյուղերում ինժե-
ներատեխնիկական աշխատողները մաս-
նակցում են ստախանովյան շարժմանը,
մեղ մոտ ինժեներների և տեխնիկների զդա-
լի մասը դեռ հետ և մնում ստախանովյան
շարժումից։

Կալիգինա— Ճիշտ ե։

Անդրեյեվ— Իսկ ընկեր Ստալինն եր
ճառում առանձնապես շեշտում եր, վոր
մենք ստախանովյան շարժման բոլոր հա-

չողությունները կիարողանանք ինչպիս
հարկն և իրացնել միայն այն ժամանակ,
յերբ այդ շարժումը գլխավորեն ինժեներ-
ներն ու տեխնիկները:

Ինչո՞վ կարելի յե բացատրել ինժեներա-
տեխնիկական աշխատողների հետ մնալն
ստախանովյան շարժումից: Արդյո՞ք կա-
րելի յե բացատրել այն բանով, վոր մեր
ինժեներներն ու տեխնիկներն ստախանով-
յան շարժմանը դեմ են: Իհարկե վոչ: Նը-
րանք վոչ միայն ստախանովյան շարժ-
մանը դեմ չեն, այլ և ուղում են մաս-
նակցել նրան, բայց նրանց զգալի մասը
պարզապես հետ և մնացել տեխնիկայի բը-
նագավառում: Այն բանվորները, վորոնք
այժմ ստախանովականներ են, համառո-
րեն առաջ են ընթացել, սովորել են, տի-
րապետել են տեխնիկային, նրանք համար-
ձակորեն ներկա նորմաներից ավելի հեռու
գնացին, իսկ ինժեներա-տեխնիկական աշ-
խատողների զգալի մասը, բարձրագույն
ուսումնական հաստատություններում հին

դասարդրքերով, հին նորմաների հիման վրա
գիտելիքներ ձեռք բերելով, դրա վրա ել
մնացել և կանգնած, չի շարունակել սովո-
րել և այդ պատճառով հետ և մնացել,
մինչդեռ տեխնիկան առաջ և գնացել: Կա-
պիտակաստական արտադրության հին նոր-
մաների հիման վրա դաստիարակված լինե-
լով, նրանք չափաղանց վարժվել են դրանց:
Դա նրանց դժբախտությունն ե, և նրանց
հարկավոր և ամեն կերպ ողնել առաջ ըն-
թանալու նոր տեխնիկային տիրապետելու,
իրենց գիտելիքներն ընդարձակելու, փոր-
ձի, համարձակության ու նախաձեռնու-
թյան գործում, վորն անհրաժեշտ և սոցիա-
լիստական արտադրության համար: Այդ
իմաստով նրանք պետք է շատ բան սովո-
րեն ստախանովականներից, անպայման սո-
վորեն ու կրկին սովորեն ստախանովական-
ներից, վորքան ել պարագոքս թվա այդ:
(Մափահարություններ):

Պետք և ամեն կերպ ողնել ինժեներա-
տեխնիկական կազմին, վորպեսզի թեթևա-

նա ցեխերի պետերի, վարպետների ու յենթավարպետների բիոնալորումը՝ նրանց վոչ հատուկ ամեն տեսակ ֆունկցիաներից։ Այդ տեսակետից գոյություն ունեցող աննորմալությունները բնորոշելու համար վորպես որինակ կրերեմ Գորկու՝ դադդյանների գործարանի հարվաքման ցեխի պետը ընկեր Զարայշենկոյի հայտարարությունը։ «Ժամանակ չկա, —ասում ե ընկ։ Զարայշենկոն, —մտածել ռացիոնալացման հարցերի մասին, տեխնոլոգիական պրոցեսի հարցերի մասին։ Մարդ հարկադրված ե զրադիւլ ամեն ինչով, միայն վոչ արտադրական պրոցեսի կազմակերպման հարցերով, վոչ տեխնիկայի հարցերով։ Յես անձամբ ստիլված եմ վիճում ամենից ալելի վաղվել ցեխերում և գործարանային վարչության մեջ։ Թե՛ յես, թե՛ ցեխային ինժեներա-տեխնիկական աշխատողներն զբաղվում ենք բացառապես պակասող դետալները, գործիքները և այլն ճարելով։ Դրա վրա ծախսվում է ժամանակի ամբողջ 100

տոկոսը։ Կարենի յե այսպես ասել՝ յետ շատ քիչ առիթ եմ ունենում դիմով աշխատելու, ավելի շատ աշխատում եմ վոտներով»։

Արդյո՞ք միմիայն դադդյանների գործարանումն ե այլպես։ Իհարկե վոչ։ Այդ տեղի ունի նաև մեր մյուս ձեռնարկություններում։ Ուստի հարկավոր ե ազատել տեխնիկական կազմը նրան վո՛չ-հատուկ, վո՛չ-տեխնիկական աշխատանքից և հարկադրել նրան զբաղվել իր գործով, այսինքն՝ տեխնիկական ղեկավարությամբ և արտադրության կազմակերպմամբ։

Բայց կա մի այլ հանգամանք ես, վորն անտարակույս պատճառ ե հանդիսանում, վոր ինժեներա-տեխնիկական կազմը բավականաչափ չի մասնակցում ստախանովյան շարժմանը. դա շատ դեպքերում նրանց աշխատավարձի սիսալ սիստեմն ե։ Մեր ինժեներա-տեխնիկական կազմը, բացի մետաղաձուլումից ու քարածխից, վորպես կանոն, վարձատրվում ե ռոճկային սիս-

տեմով։ Լավագույն դեպքում տեղ-տեղ
դեռևս չառ անկատար ձեռվ դոյություն
ունի այսպես կրչված պրեմիս՝ լավ աշ-
խատանքի համար։ Իսկ աշխատավարձի
ուղղակի կապ արտադրանքի հետ՝ դոյու-
թյուն չունի։ Դա ճիշտ չե։ Այնքան ել
դժվար չե ուղղակի կապ հաստատել ին-
ժեների աշխատավարձի և արտադրանքի
միջև։ Լինի դա պրոդրեսիվ վարձատրու-
թյուն կամ պրոդրեսիվ պրեմիս, բայց
տեխնիկական կազմի աշխատավարձը հար-
կավոր ե անսպայման կապել արտադրանքի
հետ, տեխնիկական դեկավարին նույնպես,
ինչպես և բանվորին, շահագրդուել աշ-
խատանքի արտադրողականության բարձ-
րացմամբ և տեխնիկայի լրիվ ոգտագործ-
մամբ։ (Ծափահարություններ)։

Յես դարձյալ պետք ե մատնալչեմ տեքս-
տիլ արդյունաբերությունը։ Նրանց մոտ
միանգամայն աննորմալ դրության մեջ են
դտնվում յենթավարպետները, վորոնք
փառություն լուծում են դադյահների ար-

տադրողականության հարցը։ Նրանք ստա-
նալով հաստատուն ոռճիկ, այժմ ջուլհա-
կուհիներից պակաս են վաստակում։ ՅԵՆ-
ԹԱՎԱՐԱՊԵՏՆԵՐԻ աշխատավարձը վոչ մի
կապ չունի արտադրական առաջադրանքնե-
րի կատարման հետ։ ՅԵՎ տեքստիլ սար-
քավորման ցածր ողտագործումը մասմբ
բացատրվում ե նրանով, վոր տեքստիլ
ձեռնարկությունների տեխնիկական կազմը
նյութապես անմիջականորեն չի շահագր-
դուված։ ՅԵԹԵ այլ կերպ լիներ, յենթա-
վարպետն անողայման կաշխատել արագաց-
նել դադդյահների աշխատանքը, մշտադես
կարգին պահել դրանք և այլն։ Իսկ, չնոր-
ջիվ այն հանդամանքի, վոր մանածադրուծ-
ների մոտ տեխնիկական կազմի վարձա-
տրությունը դտնվում ե կատարելապես
աննորմալ վիճակում, ուղղակի վտանգ ե
սպառնում, վոր ներկայիս յենթավարպետ-
ները ցիրուցան կլինեն, դառնալով ջուլ-
հակներ ու մանողներ, չե՞ վոր մանածա-
դրուծների մոտ յենթավարպետը, ասենք,

կենտրոնական դեմք և արտադրությունը
կարգի բերելու բնադավառում:

Ահա թե ինչու տեխնիկական կաղմի
վարձատրության սխտեմի անհրաժեշտ փո-
փոխությունն անպայմանորեն ավելի լայն
ճանապարհ կհարթի և կլոթանի տեխնիկա-
կան կաղմին՝ անցնելու աշխատանքի ստա-
խանովյան մեթոդներին:

Եել, վերջապես, վերջինը՝ կուտկաղ-
մակերպությունների աշխատանքն ստախա-
նովյան շարժումը ծավալելու ասպարե-
զում:

ԿՈՒՍԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՑԵՎ ՍՏԱԽԱՆՈՎՅԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

Ընկեր Ստալին իր ճառում ասաց.

«Անհրաժեշտ ե, վոր մեր կուսակցա-
կան կաղմակերպությունները լծվեն այդ
դործին և ովնեն ստախանովականներին՝
շարժումը մինչև վերջը հասցնելու»:

Դա, յերկի, վերջին հաշվով կլուծի ստա-

խանովյան շարժման հաջողությունը և այն
ամենը, ինչ վոր կապված է ստախանովյան
շարժման հետ։ Այս կամ այն ասպարեզում
կամ ձեռնարկության մեջ այդ շարժման
հաջողությունն ուղղակի կախված կլինի-
նրանից, թե ինչպես կլարդեն կուսակցա-
կան կաղմակերպությունները, ինչպես
վկարողանա այս կամ այն կուսակցական
կաղմակերպությունը գլխավորել ստախա-
նովյան շարժումը։

Ստախանովյան խորհրդակցությանն ըն-
կեր Ստալինի ունեցած յելութից հետո
կուսակցական կաղմակերպությունները յե-
ռանգում կերպով զբաղվեցին ստախանով-
յան շարժմամբ։ Իրենց ձիգ տվին նաև կու-
սակցական այն կաղմակերպությունները,
վորոնք հետ ելին մնում — Ավերգովի, Զել-
յարինսկի, Արևմտյան Սիբիրի և այլ կաղ-
մակերպությունները։ Բայց կարելի՞ յե-
արդյոք ասել, թե կուսակցական կաղմա-
կերպություններն ամենուրեք գործն այն-
պես են առաջ տանում, ինչպես, որինակ,

մեր Դոնեցի կուսակցական կազմակերպությունը, վորի աշխատանքի մասին այսառեղ կենտկոմի պլենումում դեկուցեց ընկեր Սարգիսովը։ Յես կարծում եմ, վոր նրա ճառը մեծ գոհունակությամբ լսեցին այստեղ ներկա գտնվող բոլոր ժողովականները։

Զայներ—ձիւտ ե։ (Մակահարություններ)։

Անդրեյեվ—Այդ ճառը հռետորի արվեստ չեր, նա արտացոլում էր Դոնեցի կուսակցական կազմակերպության աշխատանքի իրական վիճակը և ստախանովյան շարժման դեկավրման ասպարեզում նրա ձեռք բերած իրական հաջողությունները։

Զայներ—ձիւտ ե։ (Մակահարություններ)։

Անդրեյեվ—Այժմ, ընկերներ, հատկապես այդպիսի մոտեցում, այդպիսի աշխատանք և պահանջվում յուրաքանչյուր կուսակցական կազմակերպությունից՝ ստախանովյան շարժման ասպարեզում։ Կարելի՞

յե արդյոք ասել, թե այժմ մեր բոլոր կուսակցական կազմակերպությունները գործնառաջ են տանում այնպես, ինչու Դոնեցի կուսակցական կազմակերպությունը։ Դժբախտաբար, վո՞չ։ Այդ տեսակետից կուսակցական կազմակերպությունների դեկավրման մեջ դեռ չառ թուլություններ կան։

Ի՞նչ բանի յեն հանդում կուսակցական աշխատանքի առաջիկա խնդիրներն ստախանովյան շարժման բնագավառում։ Նախև առաջ այն բանին, վոր ապահովի կոմունիստների առաջատար դերը ձեռնարկություններում՝ ստախանովյան շարժման բնագավառում։ Մեզ մոտ քիչ չեն այնպիսի որինակներ, յերբ կոմունիստները ձեռնարկության մեջ նախաձեռնություն են ստախանովյան շարժումը։ Քիչ չեն նաև այնպիսի որինակներ, յերբ կոմունիստները հետ են մնում, յերբ կոմունիստների զգալի մասը դեռ ստախանովյական չե, իսկ մենք

ստախանովյան շարժումը կարող ենք ինչ-
պես հարկն եւ ծալվածել միայն այն ժա-
մանակ, յերբ կոմունիստները զլիսավորեն
այդ շարժումը: Յս կարող եյի մատնանշել
հետեւյալ որինակները, վորոնք բնավ բա-
ցառություն չեն կազմում, յերբ կոմու-
նիստները գեռ հետ են մնում ստախանով-
յան շարժման մեջ: Որինակ՝ Կուլեբակյան
դործարանը: Դա լուրջ դործարան է: Այս-
տեղ կոմունիստները 759 հոդի յին, նրան-
ցից ստախանովական են միայն 75 հոդի,
իսկ դործարանում կա 632 ստախանովա-
կան: Ուաղին-հեռախոսային դործարան
(Գորկի)՝ կոմունիստ՝ 486 հոդի, նրանցից
ստախանովական են միայն 35 հոդի: Բա-
լախանայի թղթի կոմբինատը կոմունիստ՝
340 հոդի, նրանցից միայն 13 ստախանո-
վական: Ի՞նչ են ցույց տալիս այս թվե-
րը: Նրանք ցույց են տալիս, վոր կոմու-
նիստները մի շարք գեպերում հետ են
մնում ստախանովյան շարժումից, վոր մի
շարք ձեռնարկություններում կոմունիստ-

ները դեռ առաջատար ուժ չեն և չեն գըլ-
խավորում ստախանովյան շարժումը: Ուս-
տի, կուսակցական աշխատանքի առաջնար-
կարդ խնդիրն ե՝ ապահովել կոմունիստ-
ների առավելադույն մասնակցությունն
ստախանովյան շարժմանը, ապահովել
կոմունիստների առաջատար նշանակու-
թյունն այդ շարժման մեջ:

Ստախանովյան շարժման բնագավառում
կուսակցական կազմակերպությունների
յերկրորդ խնդիրն ե՝ ղեկավարել այնպես,
վոր չմոռացվեն հետ մնացող ճյուղերը,
վոր ուշադրությունը կենտրոնացվի վոչ
միայն հսկա դործարանների, Փարբիկանե-
րի, շախտերի վրա, այլև չմոռացվեն տլն-
տեսության մյուս ճյուղերը: Իսկ այժմ
մի շարք գեպերում գործնականում ըլլու-
թյունն այնպես է, վոր բոլորը խոշոր
ձեռնարկություններն են վաղում. յեթի կո
տրակտորային դործարան, ապա բոլոր
ուժերը կենտրոնացվում են այնտեղ, իսկ
ինչ վերաբերում ե սննդի, տեղական, շի-

նարարական արդյունաբերությանը, տը-
րանապրտին և այլն, դրանց մասին մո-
ռանում են: Ճիշտ դեկավարելն այն ե,
վոր ուշադրությունը և ուժերը բաշխվեն
այնպես, աշխատանքը կազմակերպվի այն-
պես, վոր չմոռացվեն հետ մնացող, բայց
չառ կարեոր ճակատամասերը:

Գործնական դեկավարման յերրորդ խըն-
դերն ե՝ կուսակցական՝ կազմակերպու-
թյունների աշխատանքում ամենից քիչ
զբաղվել ստախանովականների ձեւական
հաշվառման հարցերով, իսկ միքանի կու-
սակցական կազմակերպությունների աշ-
խատանքը մասամբ դրան ե հանդում—հաշ-
վարկել, թե ձեռնարկության մեջ կամ
մարզում վորքան ստախանովական կա,
հաշվառման յենթարկել նրանց և այլն:
Բայց մի՞թե այդ ե բանը: Գործը սահմա-
նակակել դրանով, նշանակում ե տաղալել
ստախանովյան շարժումը: Բանը վոչ այն-
քան հաշվառումն ե, վորքան մշտապես
դեկավարելը և ստախանովյան շարժման

իրական կազմակերպման ստուգումը: Ի՞նչ
ոգում նրանից, վոր առանձին գործարան-
ներում ու Փաբրիկաներում կան հաղարա-
վոր և ավելի ստախանովականներ, բայց
գործարաններն իրենց պլանը չեն. կատա-
րում: Իսկ այդպիսինները կան:

Կուսկազմակերպության հաջորդ խնդիրն
ե՝ պայքար մղել ստախանովյան շարժման
ամեն տեսակ խեղաթյուրումների գեմ:
Կա՞ն արդյոք այդպիսի խեղաթյուրում-
ներ:

Զայներ— կան:

Անդրեյեվ — Անչուշտ կան և չեն կարող
ըլինել:

Այդ խեղաթյուրումները նախ և առաջ
արտահայտվում են այն բանով, վոր տեղ-
տեղ ստախանովյան շարժմանը սիրալ ուղ-
ղություն ե տրվում: Դարձյալ տեքստի
արդյունաբերությունը ցայտուն որինակ ե
հանդիսանում այդ հաստատելու համար:
Այստեղ ընկեր Նոսովը հանդես յեկալ և
հուզ տվեց թեթև Արդյունաբերության

ժողկոմատին, իսկ վո՞րտեղ եր իվանովու-
յի կուսակցական կազմակերպությունը:
իսկ ինչո՞ւ նա չուղղեց այդ գործը:

Ստախանովյան շարժման մեջ դեկապար-
ման բյուրոկրատիկ խեղաթյուրում և այն,
վոր տնտեսական առանձին կազմակերպու-
թյուններ փորձ են անում ամբողջ դորձը
սահմանափակել ստախանովյականների ձե-
վական հաշվառմամբ: Քիչ չեն և կլինեն
այնպիսի տնտեսավարներ, վորոնք կփոր-
ձեն քողարկվել ձեւական թվերով՝ ստա-
խանովյականների մեջ քանակով, իսկ պլա-
նի և նորմանների կատարումը նրանց մոտ
վատ դրության մեջ կլինի: Անհրաժեշտ
և անողոքաբար մերկացնել ստախանովյան
շարժման նկատմամբ ցուցաբերվող այդ
ձեւական, բյուրոկրատիկ մոտեցումը:

Իսկ մի՞թե քիչ են այնպիսի դեպքերը,
յերբ աշխատում են գլուխ պրծացնել շա-
ղակրատելով ստախանովյան շարժման
մասին: Մի՞թե մեզ մոտ քիչ ալելույակա-
նություն կա ստախանովյան շարժման

չուրջը, ամեն տեսակ խոսարաններ, մեծ
թվով ժողովներ, նիստեր, իսկ գործ՝ չկա,
իսկ ստախանովյան շարժման խկական
կազմակերպվածություն՝ քիչ և Այդ նը-
շանակում ե, վոր բյուրոկրատացած ա-
ռանձին տնտեսավարներ ու արհմիութե-
նական աշխատողներ բոլցեիկյան աշխա-
տանք կատարելու վոխարեն ուզում են ա-
զատվել ստախանովյան շարժումից և խեղ-
դել վերջինս շաղակրատության մեջ: Ան-
հրաժեշտ ե անհապաղ մերկացնել այդ բո-
լոր խեղաթյուրումները և այս կամ այն
ձեռնարկության մեջ գոյություն ունեցող
ստախանովյան շարժման վիճակի մասին
դատել վոչ թե ճոճուան բառերի ու բանա-
ձեւերի թվից, այլ իրական արդյունքնե-
րից: Իսկ մի՞թե քիչ են մեզ մոտ այնպիսի
դեպքեր, յերբ աշխատում են ստախանով-
յան շարժումը սահմանափակել առանձին
մարդկանց ռեկորդներով և դրանով սպառ-
ված են համարում իրենց խնդիրը: Մի՞թե
դա ստախանովյան շարժման խեղաթյու-

իում չե: Ստախանովյան շարժումն սպորտ
և անհատների մրցություն չե, այլ բան-
վորների մասսայական շարժում:

Սակայն կուսակցական կազմակերպու-
թյունների ավելի կարևոր խնդիրն այն ե,
վորի մասին խոսել եր ընկեր Ստալինը՝
«Սանձահարել տնտեսավարներից ու ին-
ժեներա-քեխնիկական աշխատողներից այն
բոլոր տարրերը, վորոնք համառորեն կառ-
չել են հնին, չեն ուզում առաջ շարժվել
և սիստեմատիկաբար արգելակում են
ստախանովյան շարժման ծավալումը»:

Ստախանովյան շարժումն այնպիսի ժար-
ժում ե, վորը վերջնականապես կիշտի
կապիտալիզմի վերջին մնացորդները մեր
սոցիալիստական տնտեսության մեջ՝ կա-
պիտալիստական տնտեսությանը հատուկ
տեխնիկական հիմն նորմաները և աշխա-
տանքի արտադրողականության մակարդա-
կը: Արդյոք մեր տնտեսական կազմակեր-
պություններում բոլորժուական կապիտա-
լիստական այդ նորմաների պաշտպաններ

կա՞ն, այսինքն այսպես կոչված «սահմա-
նականներ»: Այո՛, կա՛ն: Այդ դիրքն ամե-
նացայտուն կերպով արտացոլեց Հաղոր-
դակցության ճանապարհների ժողկոմատի
արդեն մերկացված մասնադեաների մի
խումբ, վորի մասին խոսեց ընկեր Ստա-
լինն իր ճառում: Ստախանովյան նորմա-
ները հանդիսանում են սոցիալիստական
աշխատանքի հաղթանակն արտադրության
կառիտալիստական նորմանների նկատ-
մամբ, հանդիսանում են կապիտալիզմի
վերջին մնացորդների արմատահանումը
մեր արտադրությունից: Ռւսոկ պարզ ե,
վոր այդպիսի շարժում չի կարող տեղի
ունենալ առանց գասակարգային թշնամի-
ների վճռական դիմադրության: Բոլորին
հայտնի բազմաթիվ փաստեր վկայում են,
վոր մեր ձեռնարկությունները թափան-
ցած դասակարգային թշնամիները սուր
պայքար են մղում: այդ արտահայտվում
է ձեռնարկություններում կատարվող ամեն
տեսակ վճարարարությամբ, այն մեխա-

Նիկմների փչացումով, վորոնց վրա աշխատում են ստախանովականները, ատանձին ստախանովականների դեմ ուղղված տեռորով և նրանց վախեցնելով։ Ամեն ինչ ցույց է տալիս, վոր դասակարգային թըշնամին ակտիվացել ե ստախանովյան շարժման դեմ իր մզած պայքարում։ Իսկ մյուս կողմից ստախանովյան շարժմանը դիմադրություն են ցույց տալիս տնտեսավարների ու տեխնիկական աշխատողների այն պահպանողական տարրերը, վորոնք դեռ դերի յեն հին նորմաների ձեռքին, վորոնք չեն ուղում առաջ ընթանալ, վորոնց շատ հոգս ու անհանդատություն կպատճառի ստախանովյան շարժումը՝ աշխատանքի վերակառուցման ասպարեզում։ Այդիսի քիչ սաբուսած չայտաբերմեց։ Իսկ վո՞րքանը դեռ չի հայտաբերվել։ Անպայման, ավելի մեծ մասը չի մերկացված, վորովհետեւ այժմ վոչ վոք չի համարձակվի բացերաց հանդես դալ ստախանովյան շարժման դեմ—ստախանովյան շարժումն ան-

հապաղ կտրորի և փոշի կդարձնի նրան։ Ուստի դասակարգային թշնամիների, կուսակցության ամեն գույնի թշնամիների աշխատանքը, սաբուսածը, ստախանովյան շարժման նկատմամբ ցուցաբերվող դիմադրությունը շատ նրբութեն քողարկվում են, վորպեսզի անիվի մեծ փայտ կոխեն և դանդաղեցնեն այդ շարժումը։ Հանցանք կլիներ թերապևտահատել այդ։ Մեր խնդիրն ե՝ հաղթահարել այդ դիմադրությունը, անողոքաբար ջախջախել ստախանովյան շարժման թշնամիներին ու սաբուսածներին և դըանով իսկ սովելի լայն ճանապարհ բանալ նրա առաջ։

Ճեշտ և, վոր մեր մամուլը մեծ աշխատանք և ծավալել ստախանովյան շարժման ասպարեզում, սակայն, աչքի անցկացնելով մեր կետրոնական և տեղական թերթերը, դասակարգային թշնամիներին և ամեն տեսակ սաբուսած մերկացնելու աշխատանքի տեսակետից։ դժբախտաբար, պետք և թույլ համարել թերթերի այդ

տշխատանքը : Թերթերը բացահայտորեն թերպնահատում են այդ խնդիրը : Ահա թե ինչու, չնայած այն հսկայական հաջողություններին, վոր տառացի ամեն որ ձեռք ե թերում մեր ստախանովյան շարժումը, այսուամենայնիվ մեր բոլոր կաղմակերպությունների հեղափոխական զգոնությունը պետք ե բարձրացվի և ավելի ուժեղացվի պայքարը ստախանովյան շարժման նկատմամբ ցուցաբերվող ամեն մի դիմադրություն ջախջախելու համար :

Ի՞նչ հետեւություններ կարելի յե անել :

Առաջին հետեւությունը՝ ստախանովյան շարժումը գտնվում է դեռ սկզբնական շրջանում : Կուսակցական ու տնտեսական կաղմակերպությունները, կոմյերիտմիությունը, արհմիությունները դեռ հսկայական աշխատանք ունեն կատարելու :

Յերկրորդ : Մենք այժմ կանդնած ենք մի կոնկրետ խնդրի առաջ . դա ամբողջ ձեռունարկություններով ստախանովյան աշխատանքի անցնելու խնդիրն է :

Յերրորդ : Պարզ և, վոր ստախանովյան շարժումը նախապատրաստեց մեր ամբողջ տնտեսության հսկայական թոփչքը դեպի առաջ, վորի չափն այժմ դժվար ե մեղ նույնիսկ պատկերացնել : Նա, անտարակույս հետ կթողնի հսկայական այն տեմպը, վորով մենք մինչև այժմ առաջ ենք գնացել տնտեսական շինարարության ապարելում :

Չորրորդ : Ստախանովյան շարժումը հաղթեց այն բանով, վոր բանվորների գերակշռող մեծամասնությունն այժմ ուզում է ստախանովյական լլնել : Ստախանովյականները հսկայական փորձ գրին մեր տըրամակրության տակ՝ արտադրողականությունն ավելացնելու, նորմաները վերանայելու, նախալծային կարողությունները վերանայելու համար : Այժմ ամբողջ վործը կախված է ստախանովյան շարժումը ճիշտ դեկավարելուց և կաղմակերպելուց : Այժմ ամեն ինչ կախված է մեղանից, վորպեսպի վորքան կարելի յե կարճ ժամա-

նակամիջոցում յուրացնենք այդ շարժման
մեծագույն հաջողությունները:

Յեվ կասկածից վեր ե, վոր մեր կու-
սակցությունը, մեր մեծ Ստալինի իմաս-
տուն դեկավարությամբ, կազմակերպելով
ստախանովյան շարժումը՝ նոր մեծագույն
հաղթանակներ կրերէ մեր յերկրին: (Բուրմ
ծափահարություններ, բոլորը վոտքի յեն
կանգնում):


Խ. Հ. Գասպարյան

Թարգմ. Հ. Թուրշյան, կոնտր. սրբազրիչ Լ. Աբովյան,
սրբազր. Վ. Զիգեզյան, տեխն. խմբ. Տ. Խաչվանքյան

Գլավվախի լիազոր 1044, ճրառ. № 347, պատվ. № 11,
տիրագ. 6000, ինդեքս. Ռ-80

Ճայկուսեամի տպարան,
Թերեգամ, Ալանիվեդյան № 27





ՀՀ Ազգային գրադարան



NL0193018

بِسْمِ اللّٰهِ الرَّحْمٰنِ الرَّحِيْمِ

الْحُكْمُ لِلّٰهِ رَبِّ الْعٰالَمِينَ
وَاللّٰهُ يُحِبُّ الْمُتَّقِينَ
وَاللّٰهُ هُوَ أَعْلَمُ بِمَا يَعْلَمُ